# ԱԶԱՏ ԱՇԽԱՐՀ

Ազատ, Անկախ, Միացյալ

Օրաթերթ

Հինգշաբթի, 24 հուլիսի 1997 | №10


## ՀԱՅ ԴԱՏԸ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Պատմաբանասիրական գիտությունների դոկտոր Ռուբինա Փիրումյանը Կալիֆորնիայի համալսարանի հայագիտական ամբիոնի դասախոս է, Հայ Դատին, Հայկական Ցեղասպանության - հրեաների ողջակիզման առնչություններին նվիրված մի շարք արժեքավոր աշխատությունների, հոդվածների, դասագրքերի հեղինակ:*

*-Հարգարժան դոկտոր Փիրումյան, Սփյուռքի որոշ դպրոցներում դասավանդում եք «Հայ Դատ» ուսումնական առարկան: Ինչպե՞ս է այդ գաղափարը ծնունդ առել, ձեւավորվել:*

-Տարիներ առաջ Հայ Դատի հանձնախումբը եւ մեր Ազգային Առաջնորդարանը միասնական որոշում կայացրին 10-12-րդ դասարաններում Հայ Դատ պարապել: Մենք մտածեցինք կամրջել Հայ Դատի, պահանջատիրության շարժումները այսօրվա հետ: Եվ զարգացնելով աշակերտի վերլուծական միտքը՝ նրան առիթ տալ, որ ինքը լավագույնս ընկալի մեր պահանջատիրության կարեւորությունը եւ սովորելով պահանջատիրության պատմությունը՝ կարողանա այսօր էլ ստեղծված իրադրությունները վերլուծել այնպես, որ ապագայում Հայ Դատի պայքարը շարունակի: Նախապես այս ուսուցումն ընթանում էր անհատների կողմից, կանոնավորված չէր, եւ ես էլ դպրոցներից մեկում դասավանդում էի: Ես զգացի, որ որքան որ նյութ պատրաստեմ, դասագրքերի բացակայության պայմաններում, դասավանդումը կախված է մնում ուսուցչի պատրաստվածությունից: Այդ ժամանակ որոշեցի դասագիրք կազմել եւ սկսեցի աշխատել: «Հայ Դատի» 10-րդ դասարանի դասագիրքը, որը մի ամբողջ խումբ է կազմել, ընդգրկում է 17-րդ դարի հայ ազատագրական շարժումներից մինչեւ ցեղասպանություն, մինչեւ 1-ին համաշխարհային պատերազմի սկիզբը: 11-12-րդ դասարանների դասագրքերը ամբողջովին ես եմ կազմել: Մեր նորագույն պատմությունը այս դասագրքերում ներկայացված է ոչ թե իբրեւ մեռած պատմություն, այլ հիմք, որով աշակերտը կարող է գնահատել ներկան: Նյութը տրվում է աշակերտին, բայց նրանից չի պահանջվում միայն վերարտադրել, սերտել այն, այլ՝ վերլուծել եւ եզրակացություններ անել, ինչը կարող է հիմնվել թե անցյալի վրա եւ թե կամրջվել ներկայի եւ ապագայի հետ: Այդպիսով, ըստ իս, կդաստիարակվեն այնպիսի երիտասարդներ, որոնց մեջ կարմատանա մեր պահանջատիրությունը, եւ նրանք կդառնան Հայ-Դատի զինվորներ:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՀԱՅ ԴԱՏԸ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 1

***-Հայ ժողովրդի պատմության վերջին հարյուրամյակը ըստ էության Հայ Դատի պատմությունն է, եւ Ձեր նպատակը յուրաքանչյուր հայի մեջ այն միտքը արմատավորելն է, որ ինքը ոչ թե սոսկ լրացնում է պատմության ժամանակը, այլ ապրում է Հայ Դատի պատմության մեջ: Այսինքն մենք խնդիր ունենք, որ պիտի լուծենք: Այս կապակցությամբ Դուք չե՞ք գտնում, որ «Հայ Դատ» ասարկան պետք է դասավանդվի նաեւ մայր Հայրենիքի դպրոցներում:***

-Ամեն անգամ, երբ լինում եմ Հայրենիքում եւ տարբեր առիթներով շփումներ եւ հանդիպումներ եմ ունենում կրթական բնագավառի մասնագետների հետ, այդ խնդիրը առաջ եմ քաշում: Ընդ որում, Հայ Դատ ասելով՝ չպետք է հասկանալ միայն այն ներկայացնող կազմակերպությունները Սփյուռքում: Հայ Դատը հայոց պատմության հիմքն է, եւ Հայրենիքում տպագրված դասագրքերում պետք է ճշմարտացի ներկայացվի հայոց պատմությունը:

Ես ուշադրությամբ ուսումնասիրել եմ Հայրենիքում լույս տեսած պատմության դպրոցական դասագրքերը, որոնք, իհարկե, տարբերվում են համայնավարների օրոք եղած դասագրքերից, սակայն ունեն երկու կարեւոր թերություն: Առաջինը՝ նյութերն են, որ առարկայական չեն, իրականությունը չեն արտացոլում: Չգիտեմ, արդյոք հեղինակների ստացած դաստիարակության կամ մտածողության ոչ մեծ փոփոխության պատճառով է ստեղծվել իրերի նման վիճակը, բայց ես նաեւ հսկայական փոփոխություններ եմ տեսնում: Համենայն դեպս, չեմ կարող վերջնականապես ասել, թե դասագրքերում եղած նյութերը միտումնավոր կերպո՞վ են այդպես ներկայացված, թե՞, իրենց կարծիքով, դա է իրականությունը:

Երկրորդ թերությունը նյութի մատուցման մեթոդն է: Նյութերը ոչ թե քարացած ձեւով պետք է մատուցվեն, ինչպես արդեն ասացի, այլ աշակերտին ինքնուրույն դատելու հնարավորություն տան:

***-Դուք խոսեցիք միտումնավորության կամ անկեղծությունության մասին: Ձեր կարծիքով, մեր իշխանությունները Հայ Դատը որպես քաղաքականություն ինչ մակարդակով են վարում, եւ ինչ արդյունավետություն ունի Հայ Դատի խնդրի վերհանումը Հայաստանի արտաքին քաղաքականության ոլորտում:***

-Ես չեմ ուզում միանշանակ եւ բացարձակ պատասխան տալ այդ հարցին: Ես ինձ քաղաքագետ չեմ համարում: Որպես պարզ դիտող, որպես հայրենիքով ապրող եւ ոչ որպես պաշտոնական անձ, անձնական իմ կարծիքն եմ ուզում հայտնել, որը Սփյուռքում շատերն են կիսում: Սկզբից էլ չունեցանք, հիմա էլ դեռեւս չունենք ազգային քաղաքականություն, եւ մեր իշխանությունները չփորձեցին նման քաղաքականության հիմքի վրա վարել արտաքին հարաբերությունները: Վերջին շրջանի դեպքերը, Ղարաբաղյան խնդիրը, մեծ պետությունների վերջին որոշումները բերում են այն եզրակացության, որ մենք տանուլ տվեցինք այդ խաղում, խաղ, ուր թուրքերն ու ադրբեջանցիները միասնական էին հանդես գալիս: Մեր իշխանությունները չօգտագործեցին կամ չուզեցին օգտագործել Սփյուռքում տարվող հսկայական աշխատանքի արդյունքներն այդ ուղղությամբ: Եվ եթե Ադրբեջանի թիկունքին Թուրքիան էր կանգնած որպես հսկա ուժ, գործոն, մեր Սփյուռքի 70 տարի շարունակ ստեղծած լծակները օգտագործվեցին ամենատարբեր, մաս-մաս եւ ոչ միասնաբար: Իսկ Ամերիկան քաջատեղյակ է, որ մեր իշխանությունները չեն բաժանում Հայ Դատի հանձնախմբերի դիրքորոշումը, եւ օգտագործում է դա իր քաղաքական նպատակների համար: Քանի որ, մեր կառավարության նման դիրքորոշման պայմաններում, Հայ Դատի հանձնախմբերի գործունեությունը չի ընկալվում որպես ամբողջ հայ ժողովրդի կամքի արտահայտություն:

***-Այսինքն մեր իշխանությունների եւ Հայ Դատի հանձնախմբերի դիրքորոշումների խզվածությունը մեծապես վնասում է մեր ընդհանուր նպատակների իրագործմանն ընդհանրապես եւ քաղաքական կյանքի որոշակի դրվագներում մասնավորապես:***

-Այո, այդ խզվածությունը ջլատում է մեր ուժերը: Ազգային արտաքին քաղաքականության բացակայությունը մեծապես վնասում է նաեւ Սփյուռքում հայապահպանության խնդրին: Մենք տարիներ շարունակ, տարբեր ձեւերով փորձել ենք հային հայ պահել եւ որոշ չափով էլ քաղաքականացնել նրան, Եղեռնի 50-ամյակից հետո հայապահպանման գործը երկրորդ փուլ թեւակոխեց եւ քաղաքականացումը զուգահեռվեց հայապահպանմանը: Այն ժամանակ մտածում էինք, որ Հայրենիքը չի կարող այդ հարցում մեզ օգնել, մենք մենակ էինք մեր պայքարի մեջ: Բայց երբ Հայրենիքն ազատագրված է, եւ երբ տեսնում ես, որ քո իշխանություններն են, այսպես կոչված ազգային իշխանություններ են եւ ոչ թե Մոսկվայի թելադրանքով գործող համայնավար իշխանությունները, ակնկալում ես, որ Սփյուռքում դժվարին հարցեր լուծելիս (հայապահպանում, լեզու, մշակույթ) մենակ չես մնա: Հայրենիքն այդ խնդիրները լուծելիս մեծ դեր կարող է ունենալ, եթե հարաբերությունները միտումնավոր չլինեն, բնականոն դառնան:

***-Իսկ ինչո՞ւ մեր իշխանությունները Հայ Դատի խնդրի արծարծման դեպքում չեն օգտագործում Սփյուռքի ուժերը: Ինչո՞ւ մեր իշխանությունները չեն ուզում ավելի ուժեղ լինել այդ առումով:***

-Հարցը շատ տարողունակ է: Նման հարցերի շուրջ շատ չեմ ուզում խորանալ, քանի որ քաղաքական հարցեր են: Հայաստանում էլ սոսկալի պակաս եմ տեսնում հայ ոգի, հայ պահանջատիրության, ինչը մտահոգիչ ու սարսափելի է: Եթե Սփյուռքում երիտասարդը չգիտի այդ մասին, մտածում ես, որ արդեն ձուլված է, այլ մշակույթների ազդեցության տակ է: Բայց եթե Հա տանում ես ապրում, հայկակա ռոց ես գնացել եւ չունես հայ ի պահանջատիրության հոգի, շատ ցավալի է: Պետք է սկ վարժարաններից սկսել ներշն դաստիարակությունը:

***-Ըստ Ձեզ, Հայ Դատը առ հերթին պետք է պաշտպանել յաստանո՞ւմ:***

-Այո: Եթե ունենք պետակա թյուն, պետական պայքարը շա վելի արժեքավոր է, արդյունա Պետության պայքարը կարող նել շատ նուրբ, ոչ թշնամական սոր սուրը Թուրքիայի դեմ ճոճ վաղը՝ Ադրբեջանի, մենք դա պահանջում, դա քաղաքակա գության չի լինի:

Բայց երբ զգում ես, որ չկա գային քաղաքականություն եւ ռում է ապազգայնացած վիճակ է ցավալի: Իմ մասնակցութ Հայ Դատին առավել ակտի կան մակարդակի վրա է: Մաս ցում եմ միջազգային գիտաժ ներին այն գիտակցությամբ, որ դասպանությունը հիմքն է մեր հանջատիրության, եւ սա ոչ մ որպես պատմության փաստ, ա առաջին հերթին, ճանաչում ե տակցում: Նույն պայքարը ես նում եմ նաեւ իմ շրջապատու մերիկյան դպրոցների մեջ: Այ ռումով հրեաները շատ առա գնացել, դպրոցների 90 տոկո հրեական ողջակիզում են ուսա եւ եթե որեւէ դպրոցի ծրագրո լինում այդ դասընթացը, հրեա ղը պահանջում է, որ իր զավ անպայման դասավանդեն այ ռարկան: Մենք չենք անում այդ նը:

Մեր աշխատանքները հ շատ են դժվարացել Ամերիկա որովհետեւ ամերիկյան շատ մալարաններ Թուրքիայից հ յական գումարներ ստանա թուրքագիտության ամբիոններ հիմնում, որոնց ողջ նպատ պատմությունը խեղաթյուրել Դրան դիմագրավելու համար հայ մտավորականությունը պե համախմբի ուժերը: Մեր իշխա թյունները եւս մեծ անելիքներ ո եթե ոչ դրամական օգնություն, կազմակերպելու իմաստով:

*Զրույցը վ*
*Գ. ԳԱՍՊԱՐՅ*